

၆၃၇

**1. Ո՞ր դրույթը չի կանոնակարգում 1949 թվականի Ժնևի կոնվենցիան.**

1. գործող բանակներում հիվանդացածների ու վիրավորվածների վիճակի բարելավումը
2. ռազմագերիների հետ վարվելը
3. պատերազմների ժամանակ բնակչության պաշտպանությունը
4. բժշկական և հոգևոր անձնակազմի իրավունքների ճանաչումը

**2. Որքա՞ն է փոթորկի արագությունը:**

1. մինչև 37. 2 մ/վ
2. 37. 2 մ/վ և ավելի
3. մինչև 32. 7 մ/վ
4. 32. 7 մ/վ և ավելի

**3. Ո՞ր տեսանկյունիության սահմանն է համարվում դիտարկման միջին գոտի.**

1. 300-600 մ
2. 400-800 մ
3. 500-1000 մ
4. 600-1200 մ

**4. Որքա՞ն պետք է լինի մոտոհրաձգային դասակի ջոկերի միջև հեռավորությունը մարտակարգով հետիոտն հարձակման ժամանակ.**

1. 0-50 մ
2. 50-100 մ
3. 100-150 մ
4. 150-200 մ

**5. Որքա՞ն է ԿԶԱ ինքնաձիգի մարտական արագաձգությունը մենահատ կրակոցներով.**

1. 30 կրակոց/րոպե
2. 50 կրակոց/րոպե
3. 60 կրակոց/րոպե
4. 100 կրակոց/րոպե

**6. Քանի՞ սմ պետք է ոտքը գետնից բարձրացնի զինծառայողը «Տեղում քայլո՛վ-ՄԱ՛ՐՇ» հրամանի դեպքում.**

1. 5-10 սմ
2. 10-15 սմ
3. 15-20 սմ
4. 20-25 սմ

**7. Ո՞ր թվականին է ընդունվել զինվորական երդման տեքստը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից.**

1. 1991 թ. դեկտեմբերի 27-ին
2. 1991 թ. օգոստոսի 24
3. 1992 թ. մայիսի 8
4. 1992 թ. հունիսի 2

**8. Ո՞վ է հեղինակել «Մարտական հրահանգներ» աշխատությունը, որտեղ նկարագրվում էր ֆիդայիներին առաջնորդող սկզբունքներ.**

1. Գարեգին Նժդեհ
2. Անդրանիկ Օզանյան
3. Արամ Մանուկյան
4. Արշակ Ջանփոլադյան

**9. Ո՞ր հայ գորավարն է Նիկոլայ 2-րդ ցարի ձեռքից ստացել «Սուրբ Գեորգիի» շքանշան.**

1. Դրաստամատ Կանայան
2. Համագասպ Սրվանձտյան
3. Հայկ Բժշկյանց
4. Անդրանիկ Օզանյան

**10. Ո՞ր դրույթը չի նշում Փավստոս Բուզանդը զինվորականության վարքականոնների դրույթները ներկայացնելիս.**

1. զինվորականը պետք է նվիրված լինի ընտանիքին
2. զինվորականը պետք է հավատարիմ լինի զինակիցներին
3. զինվորականը նույնիսկ կյանքի գնով պիտի անվերապահ պահպանի զինվորականի պատիվն ու քաջությունը
4. զինվորականը պետք է լինի իմաստուն, գթասիրտ և քաջ:

**11. Քանի՞ տարեկան երիտասարդների գորահավաք է կազմակերպել Արսեն Շարմազյանը 1918 թվականի Սյունիքի ինքնապաշտպանության ժամանակ.**

1. 16-18 տարեկան
2. 18-20 տարեկան
3. 20-22 տարեկան
4. 22-24 տարեկան

**12. Ե՞րբ է տեղի ունեցել Ջևայի ճակատամարտը.**

1. 1918 թվական
2. 1919 թվական
3. 1920 թվական
4. 1921 թվական

**13. Ո՞ր զինվորական նախարարի հրամանով է հայկական առաջին հանրապետության բանակում գրագրությունը սկսել տարվել հայերեն.**

1. Հովհաննես Հախվերդյան
2. Քրիստափոր Արարատյան
3. Ռուբեն Տեր-Մինասյան
4. Դրաստամատ Կանայան

**14. Որքա՞ն է ՀԲԱ-2Մ հակահետևակային բեկորային ականի շրջանաձև խոցելիության շառավիղը.**

1. 4 մ
2. 6 մ
3. 9 մ
4. 11 մ

**15. Որքա՞ն է հակատանկային ականների քողարկիչ հողաշերտի հաստությունը.**

1. 3-5 սմ
2. 5-8 սմ
3. 8-10 սմ
4. 10-12 սմ

**16. Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում ծանրության ուժը կրակոցի ժամանակ.**

1. դանդաղեցնում է գնդակի թռիչքը օդում
2. գնդակին հաղորդում է պտտական շարժում
3. աշխատում է շրջել գնդակը գլխամասով հետ
4. գնդակը շեղում է նետման գծից

**17. Նշվածներից ո՞րը չի համարվում զինձառայողների պատասխանատվության տեսակ.**

1. վարչաիրավական
2. նյութական
3. կարգապահական
4. քաղաքացիաիրավական

**18. Ինչպիսի՞ ազդեցության թունավոր նյութ է ֆոսգենը.**

1. նյարդակաթվածային
2. հեղձուցիչ
3. գրգռիչ
4. հոգեքիմիական

**19. Ե՞րբ է կազմավորվել 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան.**

1. 1941թ օգոստոսի 5-ին
2. 1922թ օգոստոսի 5-ին
3. 1941թ սեպտեմբերի 5-ին
4. 1922թ սեպտեմբերի 5-ին

**20. Ո՞րն է կոչվում մազնիսական սլաքի խոտորման անկյուն.**

1. Մազնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ դեպի առարկան ուղղված գծով կազմած անկյունը:
2. Կիլոմետրային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության և դեպի առարկան ուղղված գծով կազմած անկյունը:
3. Մազնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և իրական միջօրեականի միջև կազմած անկյունը:
4. Կիլոմետրային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության և մազնիսական միջօրեականի միջև կազմած անկյունը:

**21. Ինչպե՞ս է կոչվում վարակված օբյեկտներից ռադիոակտիվ նյութերի**

**հեռացումը:**

1. Ապասկտիվացում
2. Ախտահանում
3. Չեզոքացում
4. Լվացում

**22. Ո՞րը արտաքին ծածկույթների վարակների խմբին չի պատկանում.**

1. սիբիրյան խոց
2. կատաղություն
3. վեներական հիվանդություն
4. կարմրուկ

**23. Հորիզոնի ո՞ր կողմում է գտնվում եկեղեցու խորանը**

1. հյուսային
2. հարավային
3. արևելյան
4. արևմտյան

**24. Ըստ սեպագիր արձանագրությունների՝ որքա՞ն է կազմել Սարգսուրի 2-րդ արքայի զորքը.**

1. 50 հազար
2. 150 հազար
3. 250 հազար
4. 350 հազար

**25. Ե՞րբ է տեղի ունեցել Հռանդեայի ճակատամարտը:**

1. 62 թ.
2. 68 թ.
3. 337 թ.
4. 371 թ.



**26. Հայկական ո՞ր թագավորությունն ուներ բանակի հետևյալ կազմը.**

*Արքունի մշտական բանակը կազմում էր 12 հազար հեծյալ և 50 հազար հետևակային:*

1. Արարատյան թագավորության բանակ
2. Արտաշեսյան թագավորության բանակ
3. Արշակունիների թագավորության բանակ
4. Կիլիկյան թագավորության բանակ

**27. Ինչպիսի՞ կազմ է ունեցել հայկական բանակը 1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ.**

1. 2 հետևակային բրիգադ, 4 հեծյալ գունդ, 4 սահմանապահ բրիգադ, 2 հրետանային դիվիզիոն, 2 զրահագնացք, ավիացիոն ջոկատ
2. 4 հետևակային բրիգադ, 2 հեծյալ գունդ, 2 սահմանապահ բրիգադ, 4 հրետանային դիվիզիոն, 2 զրահագնացք, ավիացիոն ջոկատ
3. 2 հետևակային գունդ, 4 հեծյալ բրիգադ, 4 սահմանապահ գունդ, 2 հրետանային դիվիզիոն, 2 զրահագնացք, ավիացիոն ջոկատ
4. 4 հետևակային գունդ, 2 հեծյալ բրիգադ, 2 սահմանապահ գունդ, 4 հրետանային դիվիզիոն, 2 զրահագնացք, ավիացիոն ջոկատ

**28. Քանի՞ զեներալ և գնդապետ էր ծառայում Հայաստանի Հանրապետության բանակում 1918-1920-ին.**

1. 10 զեներալ և 20 գնդապետ
2. 10 զեներալ և 40 գնդապետ
3. 20 զեներալ և 60 գնդապետ
4. 20 զեներալ և 80 գնդապետ

**29. Քանի՞ առանձին դետալներից է կազմված ԿԱ-74 ավտոմատի հետադարձ մեխանիզմը.**

1. 2
2. 3
3. 4
4. 5

**30. Ո՞րը բնորոշ չէ էպիլեպտիկ նոպային.**

1. դեմքը կապտում է
2. բբային ռեակցիան պահպանվում է
3. բերանը փրփրոտում է
4. անոթազարկը շոշափվում է

**31. Ո՞ր շառավղով տարածքն է համարվում վտանգավոր գոտի թունավոր նյութերի տեղափոխման վթարի դեպքում.**

1. 200 մ
2. 250 մ
3. 300 մ
4. 350 մ

**32. Ի՞նչ հաճախականությամբ են տեղի ունենում կրծքային սեղմումներն ու ներփչումները 1 մարդու կողմից սիրտ-թոքային վերակենդանացում իրականացնելիս.**

1. 15 կրծքային սեղմում, 1 ներփչում
2. 15 կրծքային սեղմում, 2 ներփչում
3. 30 կրծքային սեղմում, 1 ներփչում
4. 30 կրծքային սեղմում, 2 ներփչում

**33. Ինչպիսի՞ սպառազինություն ունենա լճի նավատորմի «Աշոտ Երկաթ» ռազմաբեռնատար առագաստանավը 1918-1920 թթ-ին:**

1. Մեկ թնդանոթ, մեկ գնդացիի և լուսարձակ
2. Երկու թնդանոթ, մեկ գնդացիի և լուսարձակ
3. Մեկ թնդանոթ, երկու գնդացիի և լուսարձակ
4. Երկու թնդանոթ, երկու գնդացիի և լուսարձակ

**34. Ո՞ր պնդումն է սխալ:**

1. Եթե պետքը անցնում է մեքենայով, ապա զինծառայողը կանգնում է, շրջվում դեմքով դեպի պետի կողմը և ձեռքը հպում է գլխարկին:
2. Եթե զինծառայողի ձեռքերն զբաղված են, զինվորական ողջույնը կատարվում է գլուխը շրջելով պետի կողմը:
3. Եթե զինծառայողը զբոսնում է աղջկա հետ, ապա ինքը պետք է գտնվի նրա աջ կողմում:
4. Եթե պետը անցնում է ողջունող զինծառայողի մոտից, ողջույնը չի դադարեցվում:

**35. Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1. Ավիացիոն աղետների 80%-ը տեղի է ունենում օդանավակայաններից մոտ 9 կմ շառավղով տարածքում՝ վայրէջքի նախապատրաստվելիս և վայրէջքի ժամանակ:
2. Ավիացիոն աղետների 60 %-ը տեղի է ունենում օդանավակայաններից մոտ 9 կմ շառավղով տարածքում՝ վայրէջքի նախապատրաստվելիս և վայրէջքի ժամանակ:
3. Ավիացիոն աղետների 60 %-ը տեղի է ունենում օդանավակայաններից մոտ 19 կմ շառավղով տարածքում՝ վայրէջքի նախապատրաստվելիս և վայրէջքի ժամանակ:
4. Ավիացիոն աղետների 80 %-ը տեղի է ունենում օդանավակայաններից մոտ 19 կմ շառավղով տարածքում՝ վայրէջքի նախապատրաստվելիս և վայրէջքի ժամանակ:

**36. Ո՞ր պնդումն է սխալ:**

1. Եթե առաջին տողանի զինծառայողի թիկունքում երկրորդ տողանում զինծառայող չկա, ապա դա կոչվում է ոչ լրիվ կարգ:
2. Երթային քայլը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ շարային քայլով շարժվելու հրաման չկա:
3. Տեղում քայլելու ժամանակ «ՈւՂԻՂ» հրամանը տրվում է զինծառայողի ձախ ոտքը գետնին դնելու պահին, ապա աջ ոտքով կատարվում է ևս մի քայլ տեղում, որից հետո միայն սկսվում է շարժումը առաջ լրիվ քայլով:
4. «Շարային քայլով-ՄԱ՛ՐՇ» հրամանի կատարման ժամանակ «Շարային քայլով» նախնական հրամանը լսելուն պես զինծառայողն իրանը մի փոքր

առաջ է տալիս՝ մարմնի ծանրությունն առավելապես գցելով ձախ ոտքի վրա և պահպանելով կայուն դիրք:

**37. Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 2 մեծ և 1 փոքր բաժանքներով և գտնվում է 400 մ հեռավորության վրա:**

1. 6 մ
2. 8 մ
3. 10 մ
4. 12 մ

**38. Որոշել մարդատար վագոնի հեռավորությունը դիտորդից, եթե աչքից 50 սմ հեռավորությամբ ուղղահայաց պահված քանոնի վրա վագոնի բարձրությունը համապատասխանում է 8 մմ բաժանքի:**

1. 125 մ
2. 250 մ
3. 375 մ
4. 500 մ

**39. Մարդու քայլի երկարությունը 0,84 մ է: Որոշել նրա հասակի բարձրությունը՝ ըստ քայլը հաշվելու բանաձևի:**

1. 1,76 մ
2. 1,80 մ
3. 1,82 մ
4. 1,88 մ

**40. Կայծակի հեռավորությունը դիտակետից 2640 մ է: Որքա՞ն ժամանակ հետո**

**կլսվի որոտի ձայնը դիտակետում:**

1. 5 վրկ
2. 6 վրկ
3. 7 վրկ
4. 8 վրկ

**41. 1:50000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 5 սմ, իսկ**

**կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 7 սմ: Որոշել ուղիղ գծով եւ իրական**

**երթուղով հեռավորությունները մետրերով:**

1. 250 մ, 350 մ
2. 500 մ, 700 մ
3. 2500 մ, 3500 մ
4. 5000 մ, 7000 մ

**42. Մլաքավոր ժամացույցի թվատախտակի ո՞ր թվի ուղղությանը**

**կհամապատասխանի հորիզոնի հյուսիսային ուղղությունը ժամը 15:00-ին:**

1. 2
2. 3
3. 8
4. 9

43. Որոշել քանու ճշգրտումը ԿՁԱ ավտոմատից կրծքային թիրախի վրա հրաձգություն կատարելու դեպքում, եթե թիրախը գտնվում է 600 մ

հեռավորության վրա, իսկ քամին ձախկողային է և չափավոր:

1. 4 թիրախ դեպի ձախ
2. 2 թիրախ դեպի աջ
3. 4 թիրախ դեպի աջ
4. 2 թիրախ դեպի ձախ

44. Որոշել այրվածքի մակերեսը, եթե այրված են մարդու 1 վերին, 1 ստորին վերջույթները և կրծքավանդակի հետին մակերեսի կեսը.

1. 22,5 %
2. 27%
3. 31,5 %
4. 36 %

45. Նշանակետի բարձրությունը 800 սմ է և գտնվում է 200 մ հեռավորության

վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1.  $U = 0-03$
2.  $U = 0-04$
3.  $U = 0-30$
4.  $U = 0-40$

**46. Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 6 մ բարձրությամբ հեռագրասյուն է և փակվում է ցուցամատով:**

1. 150 մ
2. 200 մ
3. 250 մ
4. 300 մ

**47. Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտներն են՝  $12^\circ$  ,  $164^\circ$  :**

1.  $182^\circ$  ,  $346^\circ$
2.  $192^\circ$  ,  $344^\circ$
3.  $182^\circ$  ,  $344^\circ$
4.  $192^\circ$  ,  $346^\circ$

**48. Համապատասխանեցնել մարտական թունավոր նյութերը ներգործության տեսակներին.**

- |                     |                                    |
|---------------------|------------------------------------|
| ա) դիֆենիլքլորարսին | 1) մաշկաթարախային ներգործություն   |
| բ) քլորպիկրին       | 2) ընդհանուր ներգործություն        |
| գ) քլորցիան         | 3) նյարդակաթվածային ներգործություն |
| դ) իպրիտ            | 4) արտասվաբեր ներգործություն       |
|                     | 5) գրգռիչ ներգործություն           |
|                     | 6) հոգեքիմիական ներգործություն     |



**49. Համապատասխանացնել ԿՁԱ և ԿԱ-74 ավտոմատների պողպատե միջուկով գնդակի թափանցող ներգործությունը:**

- |  |             |
|--|-------------|
| ա) ամուր տոփանած ձյունապատնեշ (ԿՁԱ, 500 մ) | 1) 25-30 սմ |
| բ) հողե արգելք՝ ավազահող (ԿՁԱ, 500 մ)      | 2) 80%      |
| գ) աղյուսե շարվածք (ԿԱ-74, 150 մ)          | 3) 70-80 սմ |
| դ) 5 մմ հաստության զրահ (ԿԱ-74, 350 մ)     | 4) 50%      |
|  | 5) 10-12 սմ |
|  | 6) 90 %     |

**50. Համապատասխանեցնել հայկական կամավորական ջոկատները դրանց մասնակցած ճակատամարտերին:**

- |                           |                          |
|---------------------------|--------------------------|
| ա) 1-ին կամավորական ջոկատ | 1) Սարիղամիշի ճակատամարտ |
| բ) 2-րդ կամավորական ջոկատ | 2) Արարայի ճակատամարտ    |
| գ) 3-րդ կամավորական ջոկատ | 3) Դիլմանի ճակատամարտ    |
| դ) 4-րդ կամավորական ջոկատ | 4) Բաղեշի ճակատամարտ     |
|                           | 5) Զնայի ճակատամարտ      |
|                           | 6) Բաշկալայի ճակատամարտ  |